



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԵՐԿԱՇՈՒ ՁԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

10th March 2024

Bulletin 11/2024

### Fifth Sunday of Great Lent—The Judge

**ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ԿՈՂՄԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԵՆ  
3:1-4:9**

#### Փրկութեան ճշմարիտ ճանապարհ

Հետեւաբար, եղբայրներս, Տիրոջնով ուրախացէք: Նոյն բաները գրելը ինծի համար ճանձրոյթ չէ, բայց ձեզ ճշմարտութեան մէջ կը հաստատէ:

Զգուշացէք այն մարդոցմէ, այն շուներէն, որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ թիվատուիք: Խելական թիվատուածները մենք ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք եւ միայն Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով կը պարծենանք, եւ ո՛չ թէ Օրէնքին գործադրութեամբ կամ Աքրահամի մարմնաւոր զաւակը ըլլալով: Եթէ ատոնք բաւարար ըլլային փրկուելու համար, ինծի ոչինչ պիտի պակսէր. եւ եթէ ունէ մէկը կը կարծէ թէ մարմնական այդ կապին կրնայ կստահի, ես աւելիով կրնամ, քանի ութօրեայ թիվատուած Խարայէլացի մըն եմ, Բննիամինի ցեղէն, զտարիւն Երբայեցի եւ օրինապահ Փարիսեցի: Այնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի. եւ արդար էի այնքան՝ որքան Օրէնքին անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ Քրիստոսի սիրոյն համար: Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ համեմատած այն գերազանց շահին հետ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնապն է: Այդ գիտութիւնը ունենալու համար՝ ամէն ինչ թողուցի, ոչնուրին սեպելով, որպէսզի Քրիստոսը շահիմ, եւ կատարելապէս անոր միանամ: Այնպէս որ, իմ արդարութիւնս այլեւս Օրէնքի գործադրութենէն չի՛ զար, այլ՝ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէն, եւ այդ արդարութիւնը Աստուծմէ եկած արդարութիւնն է, հիմնուած՝ հաւատքի վրայ: Հիմա միակ փափարս է՝ ճանչնալ Քրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, եւ անոր չարչարանքներուն մասնակից դառնալ՝ անոր մահուան օրինակը իմ վրաս առնելով, որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռեներէն յարութիւն առնելու:

#### Յառաջ՝ դէպի նպատակակէտ

Չեմ ըսեր թէ արդէն յաջողած եւ կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը ձգտիմ, որովհետեւ ճիշդ ասոր համար Քրիստոս Յիսուս զիս պահեց: Եղբայրնե՛ր, ինքինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ զալիքին նայի, եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակէտը, իբրեւ մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մէզ Աստուծած, Քրիստոս Յիսուսը:

Արդ, մենքոր կատարեալ ենք՝ նոյն ձեւով խորիինք: Խսկ եթէ դուք որոշ կէտերու շուրջ տարրեր կը խորիիք, Աստուծած ինք ձեզ պիտի լուսաբանէ: Ամէն պարագայի, միասնաբար քալենք այն կանոններով, որոնցմով ընթացանք մինչեւ հիմա:

#### Our Aim:

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

Եղբայրներ, ինծի՝ նմանեցեք, եւ հետեւեցեք անոնց՝ որոնք ձեզի տուած մեր օրինակով կ'ընթանան: Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ իհմա եւս յալով կ'ըսէմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորը է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորիին: Մենք, սակայն, երկինքի քաղաքացիներ ենք եւ հոնկէ՛ կը սպասենք որ զայ մեր Փրկիչը՝ Տէր Յիսուս Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր գօրութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեան ենթարկել:

Ուրախ ըլլալու յորդոր եւ թելադրութիւններ

Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք՝ որիմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամրօթէն Տիրոջ միացած մնացեք, սիրելիներ:

Եւոդիային ու Սինտիրիին կ'աղաչեմ, եւ կը թելադրեմ որ իրարու հետ հաշտուին, քանի Տիրոջ միացած են: Դուն ալ, ո'վ հաւատարիմ լծակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու կիներուն, որովհետեւ ինծի հետ պայքարեցան Աւետարանին տարածման համար, Կղեմէսի եւ միւս գործակիցներուս հետ միասին, որոնց անունները կեանքի գիրքին մէջ արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէր Տիրոջմով. դարձեալ կ'ըսէմ ուրախ եղէր: Բոլորին հանդէա ազնիւ եղէր: Ծուտով Տէրը կու զայ: Ուեւ բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհարանութեամբ Աստուծու խնդրեցեք ինչ բանի որ կարիքը կը զզար, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցեք այն բաները՝ որոնք ճշմարիս են, պարկեշտ, արդար, մարուր, սիրելի, բարեհամբաւ, առարինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցեք այն՝ ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսար. եւ Աստուծ, որ խաղաղութիւն կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

### **The Epistle of St Paul to the Philippians Chapter: 3:1-4:9;**

Finally, my brethren, rejoice in the Lord. To write the same things to you, to me indeed is not grievous, but for you it is safe.

Beware of dogs, beware of evil workers, beware of the concision. For we are the circumcision, which worship God in the spirit, and rejoice in Christ Jesus, and have no confidence in the flesh. Though I might also have confidence in the flesh. If any other man thinketh that he hath whereof he might trust in the flesh, I more: Circumcised the eighth day, of the stock of Israel, of the tribe of Benjamin, an Hebrew of the Hebrews; as touching the law, a Pharisee; Concerning zeal, persecuting the church; touching the righteousness which is in the law, blameless.

But what things were gain to me, those I counted loss for Christ. Yea doubtless, and I count all things but loss for the excellency of the knowledge of Christ Jesus my Lord: for whom I have suffered the loss of all things, and do count them but dung, that I may win Christ, And be found in him, not having mine own righteousness, which is of the law, but that which is through the faith of Christ, the righteousness which is of God by faith: That I may know him, and the power of his resurrection, and the fellowship of his sufferings, being made conformable unto his death; If by any means I might attain unto the resurrection of the dead. Not as though I had already attained, either were already perfect: but I follow after, if that I may apprehend that for which also I am apprehended of Christ Jesus.

Brethren, I count not myself to have apprehended: but this one thing I do, forgetting those things which are behind, and reaching forth unto those things which are before, I press toward the mark for the prize of the high calling of God in Christ Jesus. Let us therefore, as many as be perfect, be thus minded: and if in any thing ye be otherwise minded, God shall reveal even this unto you. Nevertheless, whereto we have already attained, let us walk by the same rule, let us mind the same thing. Brethren, be followers together of me, and mark them which walk so as ye have us for an ensample. (For many walk, of whom I have told you often, and now tell you even weeping, that they are the enemies of the cross of Christ: Whose end is destruction, whose God is their belly, and whose glory is in their shame, who mind earthly things.) For our conversation is in

heaven; from whence also we look for the Saviour, the Lord Jesus Christ: Who shall change our vile body, that it may be fashioned like unto his glorious body, according to the working whereby he is able even to subdue all things unto himself.

Therefore, my brethren, dearly beloved and longed for, my joy and crown, so stand fast in the Lord, my dearly beloved. I beseech Euodias, and beseech Syntyche, that they be of the same mind in the Lord. And I intreat thee also, true yokefellow, help those women which labored with me in the gospel, with Clement also, and with other my fellow laborer's, whose names are in the book of life.

Rejoice in the Lord always: and again I say, Rejoice. Let your moderation be known unto all men. The Lord is at hand. Be careful for nothing; but in every thing by prayer and supplication with thanksgiving let your requests be made known unto God. And the peace of God, which passed all understanding, shall keep your hearts and minds through Christ Jesus. Finally, brethren, whatsoever things are true, whatsoever things are honest, whatsoever things are just, whatsoever things are pure, whatsoever things are lovely, whatsoever things are of good report; if there be any virtue, and if there be any praise, think on these things. Those things, which ye have both learned, and received, and heard, and seen in me, do: and the God of peace shall be with you.

## **ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՆԻ 17:20-18:14**

### **Աստուծոյ թագաւորութեան գալուստը (Մտ 24:23-28,37-41)**

Փարիսեցիներ Յիսուսի հարցուցին, թէ ե՞րբ պիտի զայ Աստուծոյ թագաւորութիւնը: Անիկա պատասխանեց.

– Աստուծոյ թագաւորութիւնը արտաքինապէս տեսանելի նշաներով պիտի չգայ. կամ պիտի չըսեն թէ «Ահա հնո է կամ հնոն», որովհետեւ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ կը գտնուի:

Ապա իր աշակերտներուն ըսաւ.

– Ժամանակ պիտի զայ, երբ դուք պիտի ցանկար Մարդու Որդիին այս օրերէն մէկը տեսնել, բայց պիտի չտեսնեք: Եւ եթէ ձեզի ըսեն՝ «Ահա հնո է կամ հնոն», մտիկ մի՛ ընէք, մի՛ հետեւիք անոնց: Որովհետեւ՝ ինչպէս կայծակը փայլատակերով կը լուսաւորէ երկնակամարին մէկ կողմէն մինչեւ միւսը, նոյնպէս պիտի ըլլայ Մարդու Որդիին իր գալստեան օրը: Սակայն նախ պէտք է որ անիկա շատ չարչարանքներ կրտ եւ մերժուի այս սերունդէն: Եւ ինչպէս որ Նոյի ժամանակ Աստուծոյ պատիժը յանկարծակի վրայ հասաւ, նոյնպէս պիտի պատահի Մարդու Որդիին օրերուն այ: Անոնք այ կ'ուտէին, կը խմէին, այր կամ կին կ'առնէին, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապան մտաւ, եւ ջրհեղեղը եկաւ բնաջնջեց զանոնք: Կամ ինչպէս Նովուի օրերուն պատահեցաւ. կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին ու կը շինէին. բայց այն օրը որ Նովու Սոլոմը ձգեց, երկինքն կրակ ու ծծումք տեղաց եւ բնաջնջեց բոլորը: Նոյնը պիտի պատահի այն օրը, երբ Մարդու Որդիին յայտնուի:

Այդ օրը, ան որ տանիք ելած է՝ թող վար իջնելով տուն չմտնէ՝ հնո գտնուող իր գոյքերը առնելու համար: Նոյնպէս, ան որ դաշտին մէջ է՝ թող տուն չվերադառնայ ունեցածները առնելու համար: Յիշեցէք Նովուի կնոջ պարագան: Ով որ կը ջանայ իր կեանքը փրկել՝ պիտի կորսընցնէ զայն, եւ ով որ կորսընցնէ իր կեանքը՝ պիտի փրկէ զայն: Կ'ըսեմ ձեզի, այդ գիշեր եթէ մէկ անկողինի մէջ երկու հոգի ըլլան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ երկու կին միասին ցորեն կ'աղան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ արտին մէջ երկու հոգի ըլլան, անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի:

Աշակերտները հարցուցին Յիսուսի. – Տէ՛ր, ո՞ւր պիտի պատահի ատիկա: Անիկա պատասխանեց.

– Անզները կը հաւաքուին հնո՞ւ ուր դիակ կայ:

**Այրի կնոջ եւ դատաւորին առակը**

Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ.

– Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՞չ Աստուծմէ կը վախնար եւ ո՞չ այ մարդոցմէ կ'ամշնար:

Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւոնք պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըստ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս զալով զիս շանհանզատացնէ»:

ապա Տէրը շարունակեց.

— Լուցէք թէ ի՞նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան. պիտի չպաշտպանմէ՝ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այն, կ'ըսէմ ձեզի՝ որ անոնց իրաւոնքը անմիջապէս պիտի պաշտպանմէ: Բայց Մարդու Որդին երբ զայ, արդեօք հաւատը պիտի գտնէ՛ երկրի վրայ:

### Փարիսեցին եւ Մարսաւորին առակը

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունեին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարիին:

— Երկու հոգի տաճար զացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մարսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մարսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շարաթը երկու անզամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մարսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեռքերը»:

— Կ'ըսէմ ձեզի, — եզրակացուց Յիսուս, — մարսաւորն է որ արդարացած տուն զնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարիի, եւ ով որ իր անձը խոնարիեցնէ՝ պիտի բարձրանայ:

### The Holy Gospel of Jesus Christ according to Luke Chapter: 17:20-18:14

And when he was demanded of the Pharisees, when the kingdom of God should come, he answered them and said, **The kingdom of God cometh not with observation: Neither shall they say, Lo here! or, lo there! for, behold, the kingdom of God is within you.** And he said unto the disciples, **The days will come, when ye shall desire to see one of the days of the Son of man, and ye shall not see it. And they shall say to you, See here; or, see there: go not after them, nor follow them. For as the lightning, that lighteneth out of the one part under heaven, shineth unto the other part under heaven; so shall also the Son of man be in his day.** But first must he suffer many things, and be rejected of this generation. And as it was in the days of Noe, so shall it be also in the days of the Son of man. They did eat, they drank, they married wives, they were given in marriage, until the day that Noe entered into the ark, and the flood came, and destroyed them all. Likewise also as it was in the days of Lot; they did eat, they drank, they bought, they sold, they planted, they builded; But the same day that Lot went out of Sodom it rained fire and brimstone from heaven, and destroyed them all. Even thus shall it be in the day when the Son of man is revealed. In that day, he which shall be upon the housetop, and his stuff in the house, let him not come down to take it away: and he that is in the field, let him likewise not return back. Remember Lot's wife. Whosoever shall seek to save his life shall lose it; and whosoever shall lose his life shall preserve it. I tell you, in that night there shall be two men in one bed; the one shall be taken, and the other shall be left. Two women shall be grinding together; the one shall be taken, and the other left. Two men shall be in the field; the one shall be taken, and the other left.

And they answered and said unto him, Where, Lord?

And he said unto them, **Wheresoever the body is, thither will the eagles be gathered together.** And he spoke a parable unto them to this end, that men ought always to pray, and not to faint; Saying, There was in a city a judge, which feared not God, neither regarded man: And there was a widow in that city; and she came unto him, saying, Avenge me of mine adversary. And he would not for a while: but afterward he said within himself, Though I fear not God, nor regard man; Yet because this widow troubleth me, I will avenge her, lest by her continual coming she weary me.

And the Lord said, Hear what the unjust judge saith. And shall not God avenge his own elect, which cry day and night unto him, though he bear long with them? I tell you that he will avenge them speedily. Nevertheless when the Son of man cometh, shall he find faith on the earth?

And he spoke this parable unto certain which trusted in themselves that they were righteous, and despised others:



Two men went up into the temple to pray; the one a Pharisee, and the other a publican. The Pharisee stood and prayed thus with himself, God, I thank thee, that I am not as other men are, extortioners, unjust, adulterers, or even as this publican. I fast twice in the week, I give tithes of all that I possess. And the publican, standing afar off, would not lift up so much as his eyes unto heaven, but smote upon his breast, saying, God be merciful to me a sinner.

I tell you, this man went down to his house justified rather than the other: for every one that exalteth himself shall be abased; and he that humbleth himself shall be exalted.



## **DAILY BIBLE READINGS FOR 2024 According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

11 March	Hebrews 1:1-14
12 March	Isaiah 7:10-8:10
13 March	Exodus 4:1-21; Joel 3:9-21
14 March	Isaiah 53:1-54:5; 1 Corinthians 15:1-28
15 March	Deuteronomy 10:1-15; Job 19:1-29; Isaiah 45:1-13
16 March	St. Gregory the Illuminator—His Passion and Descent into the Pit Wisdom 1:15-2:22; Micah 7:7-10; Philippians 1:12-21; Matthew 16:24-28

## **ՔԱՌԱՋՈՒՅԹ ՍՈՒՐԲ ՄԱՍԿՈՅՑ ՀԵԾԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ**

4-րդ դարի սկզբին նահատակված 40 վկաները Փոքր Հայրի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սերաստիա քաղաքի կայսերական զնողում: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լյուսիասը հարցարնում է զինվորներին՝ բանակում քրիստոնյաներ հայտնաբերելու նպատակով, նրանցից 40-ը, հավատարիմ իրենց հավատին, անվեհեր պատասխաններով դատավորների զայրույթն են առաջացնում և բանտարկվում: Զմեռային մի ցուրտ գիշեր նրանց նետում են Սերաստիա քաղաքի մոտ գտնվող լիճը: 40-ից միայն մեկը չի կարողանում դիմանալ տանջանքներին: Դուքս եկեղով սահցակալած ջրից, նա փորձում է փրկություն գտնել լճափին կառուցված տանը, սակայն կնքելով մահկանացուն, գրկվում է թե՝ երկրային, թե՝ երկնային կյանքից: Լուսադեմին մյուս բոլոր նահատակները երևում են լուսե պսակներով զարդարված: Պահապան զինվորներից մեկը, տեսնելով այդ, լցում է հավատով և նետվելով լիճը, պսակակից է դառնում նրան:

Աստվածային հրաշքով ձմեռային սառնամանիքին դիմակայած վկաներն առավոտյան նահատակվում են: Նրանց նշխարներն ամփոփվում են Սերաստիայում, որտեղ և հետազոտում կառուցվում է «Զառասուն մանկունք» 40-զմբեթանի տաճարը, որ կանգուն է եղել մինչև Լենկթեմուրի արշավանքը: 40 մանկանց պատմությունը հորդորում է կյանքի բոլոր դժվարությունների մեջ հավատարիմ մնալ Քրիստոսին, հաղթահարել դյուրահան զայթակղությունները՝ երկնային պսակին արժանանալու համար:

## **COMMEMORATION OF THE FORTY HOLY MARTYRS**

The Forty Holy Martyrs martyred in approximately 320 AD were Christians from various towns and cities of Lesser Armenia. They served as soldiers in the royal regiment of Sebastia. Upon the decree of Roman Emperor Licianos, interrogations were organized by Lucias, Duke of Caesarea, to reveal the Christian soldiers. Forty of the soldiers remain steadfast in their faith, defy the judges by their brave answers, and are imprisoned. One cold winter night the soldiers are thrown into a lake near Sebastia, to freeze them to death. Only one of the forty soldiers, being unable to endure the torments, comes out of the water, and tries to find salvation in a bathhouse built on the bank. The lone soldier dies and becomes deprived of both earthly and heavenly life.

At dawn, halos are seen encircling the heads of the soldiers. One of the guards charged with the execution of the forty, witnessing the holy phenomenon accepts Christ and throws himself into the lake to be martyred along with the others. In the morning it becomes apparent that through a divine miracle, the forty soldiers have been saved from freezing. This infuriates their captors who execute them and thus, they become martyrs. The martyrs' remains are buried in Sebastia, where subsequently a Forty-domed Cathedral is built. The Cathedral of Sebastia stood for nearly one thousand years until the invasion of Tamerlane and the Mongols at the end of the 14th Century. The name of the "Forty Martyrs Cathedral" has survived to this day.

### 3: This week's message from our Priest in Charge

#### Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուաւ ընթերզուածից.

Յանուն Հօր եւ Որդուոյ եւ Հոգեւոյն Սրբոյ. ամէն.

**«Կում ձեզ. Էջ սա արդարացեալ ի տուն իր քան զնա»** («Ասում եմ ձեզ. սա՛ իշաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը») (Ղուկ. 18. 14):

Աստծոյ զաւակ դարձած սիրելինե՛ր,

Վերի մի քանի բառերով Փրկիչը սահմանել է հոգեւոր ջանքի նպատակը, ըստ այդմ աղօթքի, ողորմութեան, պահքի, հոգեւոր ճիզ ու աշխատանքի նպատակը: Ամէն անգամ, երբ պիտի կը մտածէք Մեծ Պահքի մասին, երբ որեւէ մէկը ձեզ կը հարցնի պահքի ու ծոմի եւ աղօթական հսկումի մասին, միշտ յիշէք Քրիստոսի այս խօսքերը:

Հոգեւոր ընթացքը նպատակ ունի, այլապէս անօգուտ տանջանք կը դառնայ: Մեր ապստամբած միտքը, մարմինը պահքի միջոցով խոնարհեցնելու նպատակը Աստծուն մեր մէջ բերելն է, միակ Արդարով արդարանալը: Աստծոյ Որդին երկնքից երկիր խոնարհուեց՝ խաչելութեամբ մարդուն փրկելով մեղքի եւ մահուան դատապարտութիւնից: Սա աստուածային միջամտութիւն է դատապարտուած մարդկութեան նկատմամբ: Ոչ մի ուժ մարդուն չի կարող փրկել կեանքին սպառնացող մահուան թոյնից, որ մահն է, ոչ մի մարդկային ջանք, ծանօթութիւն, դրամ ու զօրութիւն չի կարող մարդուն դէպի մահուան բանտ տանելուց փրկել: Հնարաւոր չէ ոչինչ անել առանց Քրիստոսի....

Ինչո՞ւ է կարեւոր պահքի համար մեզ հարց տալը՝ «ինչո՞ւ, ինչի՞ համար եմ պահք պահում, աղօթում, ողորմութիւն տալիս»: Գաղտնիք չէ, որ շատերը աղօթում կամ ծոմ ու պահք են պահում այլ նպատակով՝ մարմնական առողջութեան, կամքի զօրացման, իրենց աշխարհային եւ մարմնական որեւէ նպատակի կատարաման եւ բազմաթիւ նման պատճառներով: Սակայն այսպիսիները նմանուում են Աստծոյ հարսանեկան հրաւերը մերժողներին, որոնք իրենց նորապսակ լինելու, նոր գնուած արտի կամ փորձարկման տարուող եզների պատճառն առաւել կարեւոր են համարում Տիրոց հետ հանդիպումից:

Մեծ Պահքի չորրորդ կիրակիի աւետարանական ընթերցումները յարատեւ ու խոնարի աղօթքի մասին են: Բայց ե՛ւ անիրաւ դատաւրին անընդհատ դիմող կնոջ օրինակում, ե՛ւ «մեղայ» ասող մաքսաւրի օրինակում Աստծուց ստանալիք արդարութեան մասին է խօսւում: Աղօթքի արդիւնքում հոգին խաղաղուում է, ներսում ուրախ է եւ պայծառ, երբ աղօթողն Աստծոյ հետ իր հաշտուելու, արդարացած լինելու զգացումն ունի: Նոյնը պահեցողութեան, ողորմութեան դէպքերում է: Աւելին, Տիրոց Մարմնի եւ Արեան սուրբ հաղորդութեան նպատակն է Քրիստոսի բերած ներմանն արժանանալն է, Փրկչով արդարանալը:

Հոգեւոր ցանկացած քայլ, արաբք, ընթացք ունենալու համար մեր ներսում Աստծոյ սէրը պիտի ունենանք եւ դա անենք խոնարհաբար, առանց մեր կամ ուրիշի աշքին մեծ երեւալու, առանց հպարտութեան: Այլապէս դրանք կարող են մեզ ոչ միայն հոգեւոր օգուտ չը տալ, այլեւ վնասել:

Այս, կայ սիսալ աղօթք, պահք կամ ողորմութիւն, երբ մեր արարքով մեր փառքն ենք փնտրում եւ ոչ Աստծունք: Պօղոս առաքեալն է յիշեցնում է, որ եթէ արժանաւոր կերպով չենք մօտենում Քրիստոսի Մարմնին ու Արեանը, ոչ թէ մեր արդարացումը, այլ դատապարտութիւնն ենք ընդունում: Ուրեմն, զգոյշ լինենք՝ միշտ նախապէս մեր ներսում պատասխանելով, թէ ինչո՞ւ, յանուն ո՞ւմ ենք անում այս կամ այն հոգեւոր քայլը: Գաղտնիքը Աստծուն ամբողջ սրտով սիրելու եւ կամաւորապէս մեր անձը խոնարհեցնելու մէջ է:

**«Ասում եմ ձեզ. սա՛ իշաւ իր տունը արդարացած, ոչ թէ միւսը. որովհետեւ, ով որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի»** (Ղուկ. 18. 14):

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

## **ԴԱՏՎՈՐԻ ԿԵՐՎԱԿԻ**

Մեծ պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի: Այս օրվա խորհուրդը բացատրում է այրի կնոջ և դատավորի մասին առակը (Ղուկ. 18:1-5): Ասս առակի՝ մի այրի կին, անընդհատ խնդրում է Աստծոց չերկնչող և մարդկանցից չվախեցող դատավորին իր դատն անել: Դատավորը կնոցից ազատվելու համար ստիպված բավարարում է նրա պահանջը: Այս առակը պատմելուց հետո Քրիստոս հավաստիացնում է բոլորին, որ եթե անարդար դատավորն այրի կնոջ դատը տեսավ, ապա Աստված առավել ևս կկատարի բոլոր նրանց խնդրանքները, ովքեր միշտ աղոթքով խնդրում են:

Առակը հորդորում է ամեն ժամ աղոթել, ինչը խորհրդանշում է հոգու մշտական մղումն առ Աստված, բայց միևնույն ժամանակ իրական աղոթքի կոչ է: Առակը պատմելուց հետո Քրիստոս ասում է. «Իսկ երբ մարդու Որդին զա, արդյո՞ք երկրի վրա հավաս կզտնի» (Ղուկ. 18:8): Առակում Հիսուս տալիս է երկրորդ զալսոյան զաղափարը: Տիրոց բառերի մեջ տիրություն ու թախիծ է զգացվում: Փրկչի համար ցավալի է, որ շատ մարդիկ կարող են ենթարկվել ահեղ դատաստանի՝ արքայության ժառանգորդներ լինելու փոխարեն:

## **SUNDAY OF THE JUDGE**

The fifth Sunday of Great Lent is called the Sunday of the Judge. The message of the day teaches us with the parable of the widow and the Judge. This parable comes to us in the Gospel of St. Luke (Luke 18:1-8). The parable tells the story of a widow who repeatedly came to a judge, who neither feared God nor respected man, and pled for her rights. For a long period of time the judge refused to act, but in the end, he fulfilled her request, to put an end to her continuous appeals. Otherwise, he feared that she would continue to return indefinitely.

After telling this parable, the Lord assures everyone, that if a man as corrupt and unfair as this judge decided in favour of the widow, then God surely would judge in favour of his own people and grant the requests of all those who submit to Him through prayer. This parable exhorts us to always and continually pray, as prayer symbolizes the soul's eternal striving and thirst for God. The parable also contains an appeal from Christ. After telling the parable, Christ says: "But will the Son of Man find faith on earth when He comes?" In His words, Jesus gives a reference to the Second Coming, and sadness and anguish are felt in the Lord's remark. It is truly painful for the Savior that many people may be subject to just, yet cruel judgment, instead of becoming the inheritors of the Kingdom of God.

## **Thank You**

**St Yeghiche Armenian Church Parish Council together with Rev Fr Nshan Alaverdyan, would like to thank the Ladies Guild members for their dedication and superb presentation of delicious Armenian traditional Lent dishes for Michink, which was last Wednesday 6th March 2024 at Diocesan Centre. More than 60 members of our Armenian Community who attended were impressed and thanked the organising committee. We also would like to thank every and all the doners for their gifts. The raised funds will be used for St Yeghiche Armenian Church running expenses.**

## **PRAYER SERVICES DURING THE GREAT LENT**

Monday, 12th February, is the beginning of Great Lent, a period which lasts 40 days. The Armenian Church defines the period of Great Lent as a time of abstinence and repentance for the faithful. It is a profound and unique period of spiritual experience.

**Liturgical celebrations on Sundays:** There are services every Sunday starting at 11:00 am at St Yeghiche Armenian Church. The faithful are welcome.

**Vigils on Friday evenings:** For the next three weeks the Friday evening vigil prayers will be held at St. Yeghiche Armenian Church (on 8th, 16th and 22nd March) starting at 6:30 pm. We look forward seeing our faithful and raise our prayers for our salvation.

#### 4: Հոգեկանություն - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Hourie Agob for the soul of her Husband the late **Dr ARSHAVIR AGOB (Տոնպատճեն Արշավիր Ագօբ)**, and for all the old and new deceased members of the **AGOB** and **HALADJIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visits. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինեք, հիւանդի այցելութեան, Ար Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռախոսութեք Ար Եղիշէ Հոգեւոր Հովիլ Տեր Նշան Քահանայ Ալավերդեանի 07548 777 147:

**Hokehankist and in Lieu of Flowers:** Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

*Your kind donations are gratefully accepted:*

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **"St Yeghiche Armenian Church"**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. **Thank you. St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.**

**Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

 **PayPal**



**Scan. Pay. Go.**